



**MILLENNIUM  
CHALLENGE CORPORATION**  
UNITED STATES OF AMERICA

**MILLENNIUM CHALLENGE  
ACCOUNT - ARMENIA**



## Հայաստանյան ֆերմերներին դուր են գալիս ամերիկյան ջերմոցները, իսկ հայաստանյան արտադրողները պատրաստ են կազմակերպել դրանց արտադրությունը

*Կաթիլային ոռոգումից հետո ամերիկյան պոլիէթիլենային քաղաճով ջերմոցները այն ամենատարածված նորամուծություններից են, որ ներդրվել են ՀՄՀ-Հայաստան ծրագրի Ջրից դեպի Շուկա /ՋԴԸ/ քաղաղրիչի կողմից: ՋԴԸ-ի հիմնական նպատակներից մեկը հայաստանյան ֆերմերներին վերապատրաստելն է և նրանց նոր տեխնոլոգիաների վերաբերյալ գիտելիքներ փոխանցելը:*

### Ամերիկյան արտադրության ջերմոցները Հայաստանում

Դժվար է հավատալ, որ ԱՄՆ արտադրության առաջին պոլիէթիլենային երկշերտ ջերմոցները Հայաստանում հայտնվել են ընդամենը մեկ տարի առաջ: Դրանք արդեն իսկ տարածում են գտել ողջ երկրով մեկ ոչ միայն ի շնորհիվ ԷյՍԻԴԻԱ/Վոկայի /ՋԴԸ ծրագրի կառավարիչ/, այլև այնպիսի դոնոր կազմակերպությունների ջանքերի միջոցով, ինչպիսիք են ՄԱԿ-ի Ջարգացման Ծրագիրը կամ Վրլդ Վիժնը (World Vision): 2008թ. վաղ գարնանն էր, երբ ԷյՍԻԴԻԱ/Վոկայն առաջին 14 ջերմոցները ԱՄՆ-ից ներկրեց Հայաստան: Հենց դրանք էլ դարձան ծրագրային ցուցադրական տեղամասեր, որոնց միջոցով ֆերմերներին պարզաբանվում է ջերմոցների բազմաթիվ առավելությունները, մասնավորապես այն, որ զինը մատչելի է, կառուցվածքը հեշտ հավաքվող, դրանք կարող են լինել ցանկացած չափի և առավել դիմացկուն են, պոլիէթիլենային քաղաճը երկար է օգտագործվում և կարող է դիմանալ ուժեղ քամուն:

### Այլ դոնոր կազմակերպություններ կրկնօրինակում են մեր նախաձեռնությունը

Մեկ տարի անց 13 նման ջերմոցներ հայտնվեցին Տավուշի մարզի Լուսաձոր համայնքում, իսկ ևս 13-ը կտեղադրվեն առաջիկայում: Այն լուսաձորցիները, ովքեր մասնակցել էին ՋԴԸ վերապատրաստումներին, դիմել էին ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրին՝ օգնելու իրենց համայնքում ևս տեղադրել այս ժամանակակից ջերմոցները Լուսաձորի զարգացման նախաձեռնության շրջանակներում: Հետաքրքրական է, որ չնայած ՋԴԸ 14 ջերմոցները սփռված են Հայաստանի տարբեր մարզերում, Սարիգյուղի բնակիչ Արամ Ամիրխանյանի ջանքերով դրանք մեծ տարածում են ստացել Տավուշում:

Վրլդ Վիժնի կողմից յոթ նման ջերմոց է տեղադրվել Լոռու մարզի յոթ տարբեր համայնքներում: Վրլդ Վիժնի մեր գործընկերները միշտ էլ մեծ հետաքրքրությամբ են հետևել, թե ՋԴԸ-ի կողմից ինչ



նորամուծություններ և նոր տեխնոլոգիաներ են ներդրվում Հայաստանում՝ դրանցից առավել արդյունավետները իրենց կողմից իրականացվող Գյուղական վայրերի տնտեսական զարգացման ծրագրում կիրառելու նպատակով: Պոլիէթիլենային քաղաճով ջերմոցներն այն նորամուծություններից մեկն է, որ դուր եկավ Վրլդ Վիժնին, և որը ծրագրի կողմից ներմուծվեց Լոռու մարզի այն համայնքներում, որտեղ աղքատությունն ու սոցիալական խնդիրների հաղթահարումը առաջնահերթ հիմնահարց է: Գյուղատնտեսական սեզոնը ջերմոցների միջոցով երկարացնելը այս նպատակին հասնելու ևս մեկ միջոց է:

### Ջերմոցները հետաքրքրություն են առաջացնում վերապատրաստման նկատմամբ

Գարիկ Ասլանյանը նոր ջերմոցի մասին լսել է Գյուղատնտեսության նախարարությունում ու սկսել հետաքրքրվել դրանցով: Ի վերջո, այցելել է Գարակերտի գիտական կենտրոն, որտեղ ցուցադրվում է առաջին այդպիսի ջերմոցը: Գարիկին գաղափարը այնքան է հրապարում, որ նա անմիջապես գրանցվում է ՋԴԸ դասընթացներին, որպեսզի ավելի լավ պատկերացում կազմի այն մասին, թե ոռոգման ինչ տեխնոլոգիաներ կարելի է կիրառել այդ ջերմատներում և ինչ մշակաբույսեր աճեցնել: Ներկայումս, Գարիկը պլանավորում է 1000 քառակուսի մետր հողատարածքի վրա ջերմոց տեղադրել և սկսել լոլիկի ու վարունգի մշակումից:

### Օժանդակություն տեղական արտադրողներին

Եթե ՄԱԿ-ի Ջարգացման ծրագիրը և Վրլդ Վիժնը ջերմոցների տեղական արտադրողներին գտել են բաց մրցույթի արդյունքում, ապա Գարիկ Ասլանյանը ԷյՍԻԴԻԱ/Վոկայից է տեղեկացել ԱգրոՄերվիս ԲԲԸ-ի մասին և նրանց պատվիրել իր ջերմատան կառուցումը: Անկախ նրանից, թե ով է տեղական արտադրողը, նրանք բոլորն էլ օգտվում են ԷյՍԻԴԻԱ/Վոկայի խորհրդից և փորձից՝ նոր կառուցվող ջերմոցները ինչքան հնարավոր է բնօրինակին նոս դարձնելու համար:

